# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, (0235) 22383; (010)250519 artashatmeria@artashat.am

## Ո Ր Ո Շ Ու Մ
**07 ԱՊՐԻԼԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ N 1521-Ա**

## «ԱՄԱՀ-ԷԱՃԾՁԲ-26/62» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար հայտարարվել է «ԱՄԱՀ-ԷԱՃԾՁԲ-26/62» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգ:

Գնման ընթացակարգի թիվ 1 չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը Edwin LLC -ն (այսուհետ՝ Մասնակից) խախտել է գնման ընթացակարգի շրջանականերում ստանձնած պարտավորությունը, մասնավորապես՝ 01.04.2026թ.-ի գնահատող հանձնաժողովի թիվ 2-րդ արձանագրությամբ Edwin LLC –մասնակցի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերով սահմանված վավերապայմանների նկատմամբ, այնուհետև 01.04.2026թ.-ին գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է և մասնակիցը պատշաճ կերպով ծանուցվել է հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ: Գնահատող հանձնաժողովի 2026թ.-ի ապրիլի 3-ի թիվ 3-րդ արձանագրությամբ արձանագրվել է որ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկել հայտում առկա անհամապատասխանությունները,որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության թիվ 2 որոշումով Edwin LLC -ի կողմից ներկայցված հայտը մերժվել է :

Ղեկավարվելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով, «ԱՄԱՀ-ԷԱՃԾՁԲ-26/62» ծածկագրով հրավերի (այսուհետ՝ Հրավեր) առաջին մասի 8.15 կետով, հիմք ընդունելով «ԱՄԱՀ-ԷԱՃԾՁԲ-26/62» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) 2026թ ապրիլի 03-ի թիվ 3-րդ արձանագրության թիվ 2 և 5 որոշումները, ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը **որոշում եմ՝**

1)Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի | | | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը | | | |
| | համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ԱՄ ԱՀ-ԷԱՃ ԾՁԲ-26/62 | 1 | միջոցառումների հետ կապված ծառայություններ | 7000000 | Edwin LLC | 008 | core str 145 | 03.04.2026 թ. | Արտաշատի համայնքապետարան | Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետ՝ Խախտել նման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:<br><br>Գնահատող հանձնաժողովի 2026թ ապրիլի 1-ի 2-րդ արձանագրությամբ արձանագրվել է՝ Edwin LLC մասնակցի կողմից ներկայացված հայտում անհամապատասխանություններ իրավերի պահանջների նկատմամբ: ՀՀ կառավարության 04 մայիս | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն կասեցվել է գնահատող հանձնաժողովի նիստը և մասնակցին՝ Edwin LLC -ին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:<br><br>Մասնակցին՝ Edwin LLC -ին համակարգի միջոցով պատշաճ ծանուցվել է անհամապատ | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | ասխանությունների մասին: Մանկիցը՝ Edwin LLC -ն չի շտկել անհամապատասխանությունները, որը հանգեցրել է՝ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը | |

2)Ապահովել սույն որոշման տրամադրումը ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին որոշման կայացման հաջորդ օրը:

3)Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ**

2026 թ. ապրիլի 07

ք.Արտաշատ